ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ.

Ներածություն

Ղեկավարվելով «Անձնական տվյալների պաշտպանության» մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 14-րդ կետով և առաջնորդվելով կառույցի որդեգրած թափանցիկության ու հաշվետվողականության քաղաքականությամբ՝ ներկայացնում է Անձնական տվյալների պաշտպանության գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) հրապարակային հաշվետվությունը, որում ներկայացված է 2024 թվականի իրականացված աշխատանքները և անձնական տվյալների պաշտպանության բնագավառում առկա իրավիճակը:

Իրավիճակի գնահատում

2024 թվականը հագեցած ու բազմաբևեռ համագործակցության տարի էր Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի համար: Տարին հռչակված էր որպես անվտանգ համացանցի տարի և հագեցած էր այս թեմայից բխող միջոցառումներով ու նախաձեռնություններով: Դրանցից առանցքայինը 2024 թվականի գարնանը հայտարարված «Ինչ գիտի համացանցն իմ մասին» համադպրոցական մրցույթն էր, որը նպատակ ուներ սովորեցնելու երեխաների ու դեռահասներին համացանցից անվտանգ օգտվելու կանոնները: Ի պատասխան համացանցային խարդախություններին ու համացանցում անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ բազմաթիվ ահազանգերին ՝ Գործակալությունն ողջ տարվա ընթացքում պարբերաբար հանդես է եկել խորհրդատվական բնույթի հրապարակումներով, մշակել է անձնական տվյալների խախտումները կանխարգելմանը ուղղված մի շարք տեղեկատվական նյութեր, այդ թվում՝ թվով 11 ձայնա և տեսահոլովակներ, որոնց նպատակն էր բարձրացնել անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ իրազեկվածության մակարդակը:

Հաշվետու տարվա ընթացքումԳործակալությունը անձնական տվյալների մշակողների կողմից օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ իրականացվել է մշտադիտարկում, անձնական տվյալների մշակման առերևույթ խախտումների դեպքում հարուցել է վարչական վարույթներ, որոնց արդյունքում վերականգնվել են անհատների անձնական տվյալների խախտված իրավունքները, վերացվել են անձնական տվյալների մշակման խախտումները և խախտումներ կատարած շուրջ մեկ տասնյակ անձնական տվյալներ մշակողների նկատմամբ կիրառվել են վարչական պատասխանատվության միջոցներ:

Միաժամանակ, հարկ է նշել, որ 2024 թվականին միջազգային և ներպետական մակարդակում էականորեն աճել է Գործակալության ճանաչելիությունը, որը անձնական տվյալների պաշտպանության միջազգային կազմակերպությունների, այլ

երկրների լիազոր մարմինների հետ երկկողմ համագործակցության ամրապնդմանն ուղղված աշխատանքների և հանրային իրազեկման միջոցառումների արդյունք է:

Մեր գնահատմամբ, սակայն, Հայաստանում անձնական տվյալների պաշտպանության իրավունքի կայացման և զարգացման ճանապարհին դեռևս առկա են շատ աշխատանքներ: Այս համատեքստում խիստ կարևոր է 2024 թվականին Եվրոպական Միության (ԵՄ) հետ մեկնարկած Հայաստանի անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ օրենսդրության կատարելագործմանն ուղղված համագործակցության ծրագիրը, որի շրջանակում ԵՄ փորձագետը Գործակալության աշխատակիցների հետ համատեղ իրականացրել է անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ օրենսդրությունում առկա խնդիրների վերհանում, ԵՄ իրավունքին համապատասխանության գնահատում և պատրաստել է ազգային օրենսդրության բարելավմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկների վերաբերյալ զեկույց:

2024 թվականի հիմնական ուղղությունները

Խորհրդատվություններ

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը սահմանում է Գործակալության լիազորությունը՝ կատարելու հետազոտություններ և մշակողների դիմումների կամ լուսաբանումների հիման վրա տրամադրելու անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ խորհրդատվություն կամ տեղեկացնելու անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ լավագույն փորձի մասին: Միաժամանակ, պետք է նշել որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի վերաբերյալ հանրության լայն շրջանակների իրազեկվածության ապահովումը շարունակում է մնալ Գործակալության առջև դրված հիմնական նպատակներից մեկը:

Ելնելով վերոգրյալից՝ Գործակալությունը 2024 թվականին ֆիզիկական անձանց, պետական մարմիններին և կազմակերպություններին տրամադրել է անձնական տվյալների մշակման վերաբերյալ շուրջ 500 խորհրդատվություն:



Վարչական վարույթներ

Գործակալությունն օրենքով նախատեսված իր գործառույթների շրջանակներում 2024 թվականին իրականացրել է շուրջ 50 գործերով անձնական տվյալների մշակման իրավաչափության քննություն, ինչպես նաև նշանակել է մեկ տասնյակից ավելի վարչական տույժեր:



Իրավական ակտերի վերաբերյալ կարծիքներ

Թվով 225 գրավոր կարծիք անձնական տվյալների մշակում նախատեսող իրավական ակտերի, այդ թվում՝ միջազգային պայմանագրերի նախագծերի վերաբերյալ:



Հանրային իրազեկում և ուսուցումներ

- Միջոցառում՝ նվիրված անվտանգ համացանցին և անձնական տվյալների պաշտպանությանը, որը կազմակերպել էր Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը:
  «Ինչ գիտի համացանցն իմ մասին» մրցույթին Ընդհանուր առմամբ մասնակցել է 100-ից ավելի դպրոցի շուրջ 400 աշակերտ:
  Մրցանակներ էին սահմանված ինչպես առաջին երեք տեղը զբաղեցրած աշակերտների համար, այնպես էլ ամենաակտիվ դպրոց, լավագույն թիմային աշխատանք, ամենանախաձեռնող ուսուցիչ անվանակարգերում: Մի շարք երեխաներ էլ ստացան հատուկ ու խրախուսական մրցանակներ մրցույթի գործընկերների կողմից:

- UNICEF կազմակերպության աջակցությամբ Գործակալության կողմից մշակվել է «Անձնական տվյալների պաշտպանության իրավակարգավորումները ուսումնական հաստատություններում» ձեռնարկը, որով կվերապատրաստվեն Հայաստանի Հանրապետության դպրոցների աշխատակիցները:

- Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ֆինանսավորմամբ ստեղծվել է Գործակալության պաշտոնական ինտերնետային կայքը (https://pdpa.am), որը կարևոր նշանակություն ունի Գործակալության մի շարք գործառույթների (իրազեկման, կանխարգելման) արդյունավետության բարձրացման համար:

- Գործակալություն-GIZ համագործակցությամբ և Քաղծառայության գրասենյակի և ԷԿԵՆԳ-ի հետ համատեղ մշակվել է Արևելյան գործընկերության տարածաշրջանում առաջինը իր տեսակի և ձևաչափի մեջ ինտերակտիվ էլեկտրոնային դասընթաց անձնական տվյալների պաշտպանության թեմայով: Դասընթացը բաց է քաղաքացիների, մասնավոր հատվածի ներկայացուցիչների, պետական և մասնավոր հաստատությունների համար:

- GIZ-ի ֆինանսավորմամբ տպագրվել է Գործակալության կողմից պատրաստված «Երեխաների նկարները համացանցում. հրապարակել՝ առանց վնասելու» վերնագրով հակիրճ բուկլետ և GIZ-ի հետ համատեղ ուժերով կազմակերպել է բուկլետի շնորհանդեսը՝ դրա վերաբերյալ իրականացնելով տեղեկատվական արշավ:

- GIZ-ի ֆինանսավորմամբ իրականացվել է անձնական տվյալների պաշտպանության ոլորտում կարևոր նշանակություն ունեցող EDPB-ի մի շարք ուղեցույցների հայերեն թարգմանությունը, որոնք հրապարակված են Գործակալության պաշտոնական ինտերնետային կայքում

- Գործակալության կողմից ՁԼՄ ներկայացուցիչներին տրվել են տասից ավելի հարցազրույցներ:

Գործակալության ֆեյսբուքյան պաշտոնական էջում հրապարակվել է շուրջ 100 տեղեկատվական նյութ: Դրանց զգալի մասը վերաբերում է համացանցային տարբեր խարդախություններին, որոնց միջոցով չարագործները տիրանում են օգտատերերի անձնական տվյալներին:

Ռեեստրի վարում, ծանուցումներ

Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ անձնական տվյալներ մշակողները մինչև կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելը պարտավոր են անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին ծանուցել տվյալներ մշակելու մտադրության մասին: Ի կատարումն սույն պարտավորության՝ հաշվետու տարվա ընթացքում 165 տվյալներ մշակողներ Գործակալությանն են ներկայացրել ծանուցումներ, որոնց ուսումնասիրությունների արդյունքում համապատասխան մշակողները ներառվել են տվյալներ մշակողների ռեեստրում:



Միջազգային համագործակցություն

Տարին կարևոր էր նաև Գործակալության միջազգային կապերի ձևավորման և զարգացման ուղղությամբ իրականացված մեծածավալ աշխատանքների տեսանկյունից:

- Հաշվետու տարում Գործակալությունը մասնակցել է ԵԽ 108 և Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին կոնվենցիաների խորհրդակցական մարմինների լիագումար նիստերին:

- Գործակալությունը մասնակցել է Երևանում կայացած հայ-վրացական իրավական 5-րդ ֆորումին: Երկօրյա ֆորումի նիստերից մեկը նվիրված է եղել անձնական տվյալների պաշտպանության իրավունքին: Միջոցառման շրջանակներում ձեռք է բերվել պայմանավորվածություն Վրաստանի անձնական տվյալների պաշտպանության ծառայության հետ խորացնելու համագործակցությունը:

- Գործակալությունը մասնակցել է GIZ-ի Տարածաշրջանային ֆոնդի կողմից Արևելյան գործընկերության երկրների համար կազմակերպած «Անձնական տվյալների պաշտպանությունը թվային դարաշրջանում» ուսումնական և փորձի փոխանակման շաբաթ Էստոնիայում՝ գործնականում ծանոթանալով թվայնացման ոլորտում Եվրոպայի ամենաառաջադեմ երկրներից մեկի՝ Էստոնիայի փորձին, մասնավորապես E-Estonia ձևաչափին, և թվայնացման այդ ողջ համատեքստում այս երկրի կուտակած փորձին՝ անձնական տվյալների

պաշտպանության բնագավառում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համագործակցությունը Էստոնիայի ԱՏՊ մարմնի հետ:

- Գործակալությունը մասնակցել է GIZ-ի և Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում հանրային կառավարման բարելավման աջակցության ծրագրի հետ Բրյուսելում կազմակերպած Արևելյան գործընկերության երկրներում հանրային կառավարման բարեփոխումների արդյունավետ կառավարմանը նվիրված երկօրյա աշխատաժողովին, ծրագրում ներգրավված երկրների ներկայացուցիչները ներկայացրել են իրենց երկրներում պետական կառավարման բարեփոխումների արդյունավետ կառավարման նախաձեռնությունները և դրանց հիմնական արդյունքները:

- Գործակալությունը մասնակցել է GIZ-ի Տարածաշրջանային ֆոնդի կողմից ԱլԳ երկրների համար Բրյուսելում կազմակերպած Անձնական տվյալների պաշտպանության ակադեմիային, որի շրջանակներում Արևելյան գործընկերության և Արևմտյան բալկանների երկրների ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել ունկնդրելու ոլորտի հեղինակավոր մասնագետների զեկույցները մի շարք արդիական թեմաներով, ինչպես նաև փորձի փոխանակման ու քննարկումների միջոցով հարստացրել են իրենց գիտելիքներն ու փորձառությունը անձնական տվյալների պաշտպանության ոլորտում: